№ 127 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 **9418** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3 № 127

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խաղաղ զարգացում. Գիւղական արդիւնաբերութեան ճգնաժամ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համակրելի երևոյթ. Քաղաքային գումայի նիստը. Նաւթարդիւնաբերողների IX ժողովը. Լազարեան ճեմարանի ակտը. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լորդ Բոզբէրի և լորդերի ժողովը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Մուրճի» գրախօսին.

ԽԱՂԱՂ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Թէ պետական անձինք իրանց ճառերում, և թէ ամբողջ եւրօպական մամուլը ոգեւորված յօդուածներով միաբերան խոստովանում են, որ Ալէքսանդր III-ի մահով Եւրօպայի խաղաղութիւնը կորցրեց իր ամենազօրեղ պաշտպաններից մէկին, որը ամբողջ 14 տարի ամեն կերպով աշխատելով հեռու պահել Ռուսաստանը պատերազմից, դրանով ազատեց նոյն իսկ Եւրօպան միլիոնաւոր անմեղ մարդկանց արիւն թափելուց...

Սակայն մի կողմից ոգեւորված յարգանք արտայայտելով դէպի այն Միապետի անձը, որը խաղաղութեան կողմնակից հանդիսացաւ իր ամբողջ գործունէութեան ժամանակ, միւս կողմից նոյն պետական անձինք, նոյն բարձր դիրք ունեցող ճառախօսները տարիներից ի վեր պատերազմական դրութեան մէջ են պահում ամբողջ Եւրօպան, սպառնալով իւրաքանչիւր րոպէ պատերազմի փողը փչել և դրօշակը ձեռքին արեան դաշտը դուրս գալ...

Ֆրանս-պրուսական պատերազմից յետոյ մօտ 25 տարի է արդէն, որ Եւրօպայի կենտրօնում պատերազմ չէ եղել, իսկ վերջին ռուս-թրքական պատերազմից աւելի քան 15 տարի է անցել,—բայց այդ ահագին ժամանակամիջոցում խաղաղ Եւրօպան ծծեց իր ամբողջ ֆինանսական ոյժը, և միլիարդներ գործ դրեց զօրանոցները մեծացնելու, թնդանօթները բազմացնելու և մարդասպանութեան զէնքերը կատարելագործելու համար։

Եւ ահա այն միջոցին, երբ Եւրօպայի տնտեսական վիճակը բարւոք դրութեան մէջ չէր, երբ երկրի կուլտուրական զարգացման համար փող չը կար,—նոյն այդ միջոցին, ասում ենք, եւրօպական պետութիւնները ահագին գումարներ, անթիւ միլիարդներ էին գործ դնում, որպէս զի աւելի առաջ մղեն միլիտարիզմի գործը, որպէս զի աւելի լաւ պատրաստվեն հարեւանին կործանելու և նրա արիւնը թափելու համար։

Դա մի կեղծ, շինծու վիճակ է, որի մէջ գտնվում էր ամբողջ Եւրօպան վերջին տասն հինգ, քսան տարվայ ընթացքում, երբ թէև պատերազմ չեղաւ, մարդկանց արիւն չը թափվեց, թնդանօթները չորոտացին, բայց ազգերի տնտեսական ոյժերը սպառվեցին։

Եւ ահա այժմ, միաբերան ցաւ յայտնելով, որ խաղաղութեան գործը զրկվեց մի այնպիսի ուժեղ համոզված պաշտպանից, ինչպիսին էր Ռուսաստանի հանգուցեալ Կայսրը,—Եւրօպան և նրա պետական կեանքի ղեկավարները, անկասկած, կը շարունակեն առաջ գնալ նոյն կեղծ, խաբուսիկ ընթացքով, վատնելով իրանց ոյժի մեծ մասը „խաղաղ պատերազմի" անվերջ և կործանիչ ծախսերի վրա...

Սակայն Եւրօպան ներքին, տնտեսական զարգացման համար կարօտ է ոչ թէ կործանիչ պատերազմների, այլ խաղաղ, հանգիստ կուլտուրական զարգացման, հեռու պատերազմի դաշտից։

Եւ ահա այդ տեսակէտից, վերին աստիճանի նշանաւոր, վերին աստիճանի ուրախալի են Ռուսաստանի երիտասարդ Կայսր, Նորին Մեծութիւն Նիկոլայ II-ի անդրանիկ մանիֆէստի այն խօսքերը, որոնցով երիտասարդ Կայսրը խոստանում է հեռու պահել Իր հայրենիքը պատերազմից, ասելով. „Մեր նպատակը կը լինի միշտ թանգագին Ռուսաստանի խաղաղ զարգացումը"։

Բարձրագոյն հրովարտակի այդ գեղեցիկ խօսքերը նոր դրաւական են ոչ թէ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ եւրօպական խաղաղութեան համար։

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Սկսած Ատլանտեան օվկիանոսից մինչև Ուրալեան լեռնաշղթան՝ ամբողջ Եւրօպայի կալուածատէր դասակարգը սաստիկ դատվում է, որ հողային արդիւնքների գները ընկնում են։ Հողի մշակութեան վրա գործ դրվող ծախքերը օրից օր բազմանում են և մեծանում, իսկ հողից ստացած արդիւնքի վաճառումը այնքան քիչ դումար է բերում, որ անկարելի է լինում ծախքերի համար վերցրած տոկոսները վճարել, կապած պայմանները պահպանել, բանւորին վարձատրել՝ նրա օրավարձը նախկին աստիճանի վրա թողնելով։

Այս րոպէիս Հարաւային Ռուսաստանում տեղի ունեն մի շարք երևոյթներ, որոնք ցոյց են տալիս, որ կալուածատիրական ճգնաժամը սուր կերպարանք է առել։ Կալուածքները վաճառվում են բանկերի միջոցով. կապալառուները փախչում են կալուածքներից և թողնվում, որպէս զի չը վճարեն պարտաւորված կապալադրամը, երկրագործական արդիւնքները մնում են կալուածքում երեսի վրա թողնված, որովհետև նրանց գնող, վերցնող չը կայ այն գներով, ինչ գնով որ առաջարկում է կալուածատէրը։

Անգլիական պարլամենտը շատ լուրջ վերաբերվեց տնտեսական այդ մեծ խնդրին և կազմեց մի յատուկ յանձնաժողով, որը պէտք է ուսումնասիրի այդ հարցը և մշակի այն միջոցները, որոնցով կարելի է կանգնել այդ ճգնաժամի դէմ։ Յանձնաժողովի զեկուցագիրները պարունակում են բազմաթիւ փաստեր այն մասին, թէ ինչպէս մեծ կալուածատէրերը տարուց տարի ստիպված են փոփոխել տնտեսութեան եղանակները իրանց նեղ վիճակից մի կերպ դուրս գալու համար։

Գերմանական ագրարիների այն մեծ ողբը, որ լինում էր այն ժամանակ, երբ Գերմանիան առևտրական դաշնակցութիւն էր կապում Ռուսաստանի հետ, մասամբ այս ընդհանուր ճգնաժամի արձագանքն էր ներկայացնում։

Բայց այդ ճգնաժամի միջոցին մի երևոյթ զգալի կերպով աչքի է ընկնում. այդ այն է, որ խոշոր տնտեսութիւնը աւելի սաստիկ է վնասվում, քան թէ փոքր տնտեսութիւնը և այդ պատճառով առաջինը ընկնում է, իսկ երկրորդը նոյն իսկ զարգանում, օգտվելով առաջինի անկումից։

Եւ յիրաւի, խոշոր տնտեսութիւնը, բացի մշակներից, որոնց պէտք է ապահովի պատշաճաւոր օրավարձով, պարտաւոր է վարձատրել բոլոր մեծ և փոքր կառավարիչներին, հատուցանել իր տոկոսները և բաւականաչափ դումար յետ պահել իր գոյութեան համար։ Մինչդեռ երբ հողը ընկնում է անմիջապէս մշակների ձեռքը, այն ժամանակ մի անդամից ոչնչանում են շատ ծախքեր. իսկ մշակը չէ խնայում իր աշխատանքը և իր եռանդը, և գործում է անխոնջ կերպով, որքան կարելի է մեծ շահ արդիւնաբերելու նպատակով։

Ի հարկէ գիւղացու համար դժուար է այնքան դումար գտնել, որ այն դէպքում, երբ հողը վաճառվում է, կարողանայ այդ հողը իր սեփականութիւն դարձնել, և նա միայն կապալով է վերցնում խոշոր կալուածատէրերից։ Բայց պետական և նահանգական հիմնարկութիւնները կարող էին օգնութեան գալ այդ գործում և միջնորդ հանդիսանալ կալուածատիրոջ և գիւղացիների մէջ։ Այդպիսի մի գործողութիւն կապատէր ժողովրդին զանազան պատահարներից, կը կանոնաւորէր նրա տնտեսական հաշիւները և միջոց կը տար աւելացնել իրան կերակրող հողի քանակութիւնը, որի պակասութեան մասին նա այնքան գանգատվում էր վերջին տասն, տասնհինգ տարիների ընթացքում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԵՐԵՒՈՅԹ

Ամբողջ Կովկասի հայերի մէջ գործում են երեք բարեգործական հասատաութիւններ,—Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը իր 19 ճիւղերով, Բագուի Մարդասիրական ընկերութիւնը և Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը։ Այդ բոլոր ընկերութիւնները, իրանց միջոցները ներածին չափ, աշխատում են որքան կարելի է լայն կերպով իրագործել իրանց նպատակները։

Սակայն մօտից քննելով այդ ընկերութիւնների գործունէութիւնը, դժուար չէ տեսնել, որ նրանք ծաղկած վիճակի մէջ չեն և շատ հեռու են այն դերը կատարելու վիճակից, որը իսկապէս պէտք է կատարէին հայ հասարակութեան մէջ։ Իսկոյն աչքի է ընկնում միջոցների աղքատութիւնը և ոյժերի պակասութիւնը։

Ամբողջ Կովկասի հայերի մէջ գործում են երեք բարեգործական հասատաութիւններ,—Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը իր 19 ճիւղերով, Բագուի Մարդասիրական ընկերութիւնը և Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը։ Այդ բոլոր ընկերութիւնները, իրանց միջոցները ներածին չափ, աշխատում են որքան կարելի է լայն կերպով իրագործել իրանց նպատակները։

Սակայն մօտից քննելով այդ ընկերութիւնների գործունէութիւնը, դժուար չէ տեսնել, որ նրանք ծաղկած վիճակի մէջ չեն և շատ հեռու են այն դերը կատարելու վիճակից, որը իսկապէս պէտք է կատարէին հայ հասարակութեան մէջ։ Իսկոյն աչքի է ընկնում միջոցների աղքատութիւնը և ոյժերի պակասութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՄՈՒՐՃԻ» ԳՐԱԽՕՍԻՆ

«Մուրճ» ամսագրի վերջին համարում պ. Ա. Ա. նուիրել է իմ «Դարվինիզմ» գրուածքին մի քննադատութիւն՝ բաղկացած 11 երեսներից։

Ըստ «Մուրճի» գրախօսի՝ գրուածքիս ամենամեծ պակասութիւններից մէկն այն է, որ գրուածքս չափազանց տարրական է, աղքատ բովանդակութիւնով։ Նրա ասելով՝ գրուածքիս մէջ բերված մտքերը և փաստերը հայ հասարակութեան մէջ արդէն համարեա ամենքին յայտնի են, այնպէս որ նոր բան համարեա թէ չէ ասված։ Գրախօսի կարծիքով՝ հայ հասարակութեան համար հարկաւոր է «Դարվինիզմին» վերաբերող մի գիրք, որը լինէր անհամեմատ աւելի հարուստ փաստերով և որը ծանօթացնէր մեզ մինչև անգամ «այն յառաջադիմութեան հետ, որը արել է գիտութիւնը մինչ այսօր»։

«Մուրճի ընթերցողի համար մնում է անորոշ մի հարց, թէ այդպիսի մեծ պահանջներ դնելով, քննադատը ո՞ր շրջանն է ի նկատի ունեցել։ Մթթէ, պ. Ա. Ա., դուք իրաւ համոզված էք, որ ամբողջ հայ հասարակութիւնը կամ գոնէ՝ նրա մեծագոյն մասը արդէն գիտէ դարվինիզմի գլխաւոր կէտերը, այնպէս որ կարիք չը կայ տարրական գրքերի։ Եթէ այդ էք կամենում ասել, այն ժամանակ մեզ մնում է միայն զարմանալ ձեր հակայական օպտիմիզմի վրա։ Այդ երբ և ինչպէս պատահեց, որ հայ հասարակութիւնը ստացաւ այնպիսի մեծ պատրաստութիւն, որպիսին անհնարին է երևակայել նոյն իսկ ռուս հասարակութեան մէջ։

Իրողութիւնը սա է, և այդ իրողութիւնը վաղուց յայտնի պէտք է լինէր գրախօսին, որ հայ հասարակութիւնը՝ ինչպէս և ամեն մի հասարակութիւն՝ բաղկացած է զանազան խաւերից, զանազան շրջաններից, որոնք մի և նոյն զարգացումը չունեն։ Գուցէ այդ շրջաններից մէկի ներկայացուցիչները ունենային այնպիսի մեծ պատրաստութիւն և պահանջներ, ինչպէս երևակայում է «Մուրճի» քննադատը, սակայն միւս շրջանները, որոնք և կազմում են հասարակութեան մեծագոյն մասը, չունեն այդպիսի մեծ պատրաստութիւն։ Ահա հէնց այս երկրորդ կարգի շրջանների համար է նշանակված գրուածքս, որ և պարզ յայտնված է իմ առաջաբանում։

Եւ ինչ էք ուզում դուք։ Պահանջել մի փոքրիկ ժողովրդական գրքոյկից, որ նա լինի «մի լաւագոյն և կատարելագոյն պարզաբանութիւն դարվինիզմի կը նշանակի միանգամայն չը հասկանալ, թէ ինչ բաներ են այդ տեսակ հրատարակութիւնները։ Վերջապէս, գուցէ դուք պահանջում էք, որ Հրատարակչական ընկերութիւնը սակաւ պատրաստված շրջանների պահանջներին գերադասէ այն փոքրիկ շրջանի պահանջները, որը իմանալով գիտութեան հիմնական կէտերը՝ ձգտում է աւելի ընդարձակ կերպով ծանօթանալու գիտութեան հետ։ Եթէ այս է ձեր ասածը, այն ժամանակ կարող ենք հաւատացնել ձեզ, որ հաղիւ թէ Հրատարակչական ընկերութիւնը հետևի ձեր խորհրդին։

Այժմ անցնենք այն սխալին, որը գտնում է պ. գրախօսը մեր գրուածքում։ Ահա այդ սխալը։ Վեցերորդ գլխում ասված է, որ բացի բնական ընտրութիւնից բնութեան մէջ գոյութիւն ունի մի երկրորդ տեսակ ընտրութիւն, այն է սեռային ընտրութիւնը։ Մեր այս խօսքերը զարմացրել են «Մուրճի» գրախօսին։ «Ճիշդ է այդ արդեօք, բացականչում է նա։ Մթթէ սեռային ընտրութիւնը մի երկրորդ տեսակ ընտրութիւն է քան բնական ընտրութիւնը»։ Ցեսոյ նա յայտնում է, որ միանգամայն սխալ է ջոկել բնական ընտրութիւնը սեռային ընտրութիւնից։ «Ճիշդ է, շարունակում է գրախօսը, որ Դարվինը «Մարդու ծագումը» գրուածքում... առանձին գլուխ յատկացրեց սեռային ընտրութեան, բայց դրանով նա չի ուզեցել յայտնել, թէ իբր 1859-ին հրատարակած «Տեսակների ծագումն» գրուածքում բացատրած բնական ընտրութիւնը ջոկ բան է, սեռային ընտրութիւնը ջոկ բան. այլ նա այդպէս վարվել է միմիայն այն պատճառով, որ նա սեռային ընտրութեան մասին տեղեկութիւնների առատին պաչար ունէր»...

«Մուրճի» գրախօսի տօնը այնպէս է, որ միամիտ ընթերցողը կարող է կարծել, թէ նա ծայրէ ի ծայր ուսումնասիրել է Դարվինի գրուածքը։ Տեսնենք պ. Ա. Ա. իրաւ այդպէս քաջ ծանօթ է Դարվինի գրուածքների հետ։ Վերցնենք նոյն այն գրուածքը, որի վրա նա մատնացոյց է անում, այն է «Մարդու ծագումը»։ Այդ գրուածքի առաջին հատորի 293 երեսում Դարվինը ասում է հետևեալը... «Որձերը ստացել են իրանց այժմեան կազմուածքը ոչ այն պատճառով, որ աւելի ընդունակ են եղել պահպանելու իրանց կեանքը գոյութեան կռուում (ուրեմն ո՛չ չնորհիւ բնական ընտրութեան), այլ այն պատճառով, որ նրանք ունէին դերազանցութիւն միւս որձերի հետ համեմատած... Այդ տարբերութեան կարևորութիւնն էր, որ ստիպեց ինձ այդ ձևը անուանել սեռային ընտրութիւն»։ Տեսնում էք, Դարվինը ոչ միայն տարբերութիւն է գտնում բնական և սեռային ընտրութիւնների մէջ, այլ և գտնում է, որ նրանց միջի տարբերութիւնը կարևոր է։

Այդ ընկերութիւնների մէջ իր համակրելի և լայն ծրագրով Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը ամենից շատ նեղված է դրամական միջոցների պակասութեան պատճառով։ Եւ դրա հետ միասին ոչ մի ընկերութիւն այնքան չէ գրաւում դէպի իրան կարօտեալներին, որքան նա։ Պատահում է որ և է ժողովրդական աղէտ, խօլերա, սով, գաղթականութիւն, ամեն կողմից դիմում են այդ ընկերութեան օգնութեան. կամենում են որ և է մի գիւղում բանալ մի ծխական դպրոց, մի փոքր գրատուն, դիմում են դարձեալ նոյն ընկերութեան. չքաւոր ուսանողները, զանազան դպրոցների աշակերտները ամեն կողմից դիմում են այդ ընկերութեան և օգնութիւն խնդրում. էլ չենք խօսում հալիւրաւոր տառապեալների մասին, որոնք ամեն օր պաշարում են խորհրդի գրասենեակը և հաց, հագուստ, օգնութիւն պաղատում։

Իսկ այդ ահագին կարիքներին, այդ անյետաձգելի պահանջներին, այդ օգնութիւն հայցող աղաղակներին պատասխան և արձագանք տալու միջոցից բոլորովին զուրկ է ընկերութիւնը։

Չէ կարելի չը յիշատակել այն տխուր և մարդասիրութեան զգացմունքին պատիւ չը բերող երևոյթը, որ հայ հասարակութիւնը շատ անտարբեր կերպով է վերաբերվում դէպի այդ բարեգործական հիմնարկութիւնը։ Ամեն բան պահանջելով այդ ընկերութիւնից, նա չէ աշխատում օգնել նրան իրականացնելու այդ պահանջները։

Ցաւալի և միանգամայն ամօթալի է ասել, որ Բարեգործական ընկերութիւնը Թիֆլիսի պէս մի քաղաքում, որտեղ 50,000-ից աւելի հայ կայ, հազիւ 250 անդամ ունի. ցաւալի է ասել, որ այդ ընկերութեան նախահաշիւը իր բոլոր 19 ճիւղերով հազիւ հասնում է տարեկան 35,000 ռուբլու... Անհերքելի իրողութիւն է, որ կեանքի ոչ մի երևոյթ, որքան և ծանր ու դժնդակ լինի նա, հասարակական ոչ մի աղէտ չէ գրգռում և դրդում մեր հայ կրեսոսներին բանալ իրանց քսակների բերանը և այդ ընկերութեան միջոցով թեթևացնել այդ աղէտների դառնութիւնը։ Հայ հարուստները, երբ մտենում է իրանց մահվան րօպէն, նոր սկսում են կտակներ անել և իրանց բարեգործական զգացումները արտայայտել՝ առատ նուէրներ անելով միմիայն վանքերին, եկեղեցիներին։

Այս հանգամանքը, ինչպէս առիթ է եղել շատ անգամ ասելու, բացատրվում է գուցէ նրանով, որ դարերի ընթացքում հայի բարեգործութեան միակ ասպարէզը եկեղեցին է եղել։ Բայց չը պէտք է մոռանալ, որ հին ժամանակներում եկեղեցին եղել է և միակ հաստատութիւնը, որտեղ ժողովուրդը ոչ թէ միայն հոգևոր, այլ և ֆիզիկական ամեն տեսակ մխիթարութիւն և օգնութիւն է ստացել, որ սփոփել, խնամել է ամեն տեսակ տառապեալներին իր հիւանդանոցներով, հիւրանոցներով և այլն։ Այժմ եկեղեցին այդ հոգսերի մեծ մասը գցել է հասարակութեան վրա. այժմ նրա այդ դերը կատարում են բարեգործական և մարդասիրական հաստատութիւնները։

Այդ տեսակէտից «Մշակի» անցեալ համարներից մէկի մէջ հաղորդված լուրը, որ մի հայ նուիրել է իր անչարժ կալուածքը Բարեգործական ընկերութեան, մի նուէր, որ իր տեսակի մէջ առաջինն է ընկերութեան գոյութեան օրից ի վեր, բաւական նշանաւոր երևոյթ է կազմում։ Նա ցոյց է տալիս, որ հայ հասարակութեան մէջ վերջապէս սկսում է հասունանալ այն միտքը, թէ բարեգործական հաստատութիւնները նոյնքան, գուցէ և աւելի արժանի են խրախուսվելու, նոյնքան կարող են յիշատակը անմահացնող կոթողներ հանդիսանալ, որքան եկեղեցին ու վանքերը։

Մեզ մնում է միայն ցանկալ, որ այդ համակրելի երևոյթը եզակի չը լինէր։ Հայոց վանքերը և եկեղեցիները դարերի ընթացքում շատ միլիոններ կլանել են.—այժմ ժամանակ է, որ ժողովրդի բարեգործութիւնից մաս ստանան և այն բարեգործական հիմնարկութիւնները, որոնց նպատակն է օգնել անտուն, անտէր աղքատին, հայրենիքից հեռացած պանդուխտ, ուսման ծարաւ ուսանողին, և առհասարակ կարօտ մարդուն։

Հ. Ա.

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏը

Թիֆլիսի Դումայի հոկտեմբերի 31-ի նիստում, քաղաքագլուխը առաջարկեց Դումայի քննութեանը դպրոցական յանձնաժողովի զեկուցումը սկզբնական դպրոցների մասին։ Դպրոցական յանձնաժողովի այդ զեկուցումը շատ ընդարձակ է, և չը նայելով, որ մեր ընթերցողները ծանօթ են արդէն այդ զեկուցման ընդհանուր հիմնական կէտերի հետ, աւելորդ չենք համարում կարճառօտ կերպով վերականգնեցնել նրանց յիշողութեան մէջ այդ հարցի էական մասը։

Ինչպէս յայտնի է, քաղաքային դպրոցական մասնաժողովը կամենում էր տարրական երեք նոր դպրոցներ բանալ մեր քաղաքի զանազան թաղերում, բայց ուսումնարանական իշխանութիւնը չը թոյլատրեց քաղաքային դպրոցական մասնաժողովին իրագործել իր այդ որոշումը։ Ուսումնարանական իշխանութեան կարծիքով, սենատի վճռի համաձայն, քաղաքային սկզբնական դպրոցները հասարակական դպրոցներ են համարվում. իսկ Դումայի և յանձնաժողովի կարծիքով, այդ դպրոցները մասնաւոր են համարվում։ Քաղաքային դպրոցական մասնաժողովի համոզմամբ, քաղաքային դպրոցների ուսումնարանական մասի զեկավարութիւնը կախված պէտք է լինի Դումայից, և ոչ թէ ուսումնարանական իշխանութիւնից։ Ահա այդ հարցի կարճառօտ էութիւնը։

Քաղաքային դպրոցական յանձնաժողովը. քննելով այդ հարցը, հետևեալ որոշումը կայացրեց.

1) Ի նկատի ունենալով ժողովրդական դպրոցների պ. դիրեկտորի գրութիւնը 1894 թ-ի հոկտեմբերի 5-ից, որով նա առաջարկում է չը բանալ երեք նոր դպրոցները և մի և նոյն ժամանակ, որովհետև ոչ մի օրէնքով քաղաքային հասարակութիւնից իրաւունք չէ խլվում մասնաւոր դպրոցների իրաւունքով դպրոցներ բանալ, գանգատ տալ ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ ժողովրդական դպրոցների դիրեկտորի դէմ, որը մերժեց թոյլ տալ իր խնդրած երեք նոր դպրոցների բացումը։

2) Իսկ այն բանի վերաբերմամբ, որ ժողովրդական դպրոցների տեսուչը պահանջում է, որ քաղաքային սկզբնական դպրոցների ուսուցիչները դպրոցական բոլոր խնդիրների համար անմիջապէս իրան դիմեն, քաղաքային ուսումնարանական յանձնաժողովը առարկում է, թէ որովհետև պ. տեսչի պահանջները հակասում են Կովկասի մասնաւոր դպրոցներին վերաբերեալ կանոնադրութեանը, որի հիման վրա քաղաքային դպրոցները բացված են և գործում են, առաջարկել քաղաքային դպրոցների ուսուցիչներին՝ նրանց յանձնված դպրոցների գործերի համար առաջվան պէս դիմել քաղաքային դպրոցների կառավարչին, կամ նրա միջոցով քաղաքային ուսումնարանական յանձնաժողովին. նոյնպէս ուսումնարանական իշխանութեան բոլոր կարգադրութիւնները ընդունել ի զեկավարութիւն միմիայն քաղաքային դպրոցների վերահսկողի միջոցով։

Դուման, երկար վիճաբանութիւններից յետոյ, համարեա միաձայն վճռեց հաստատել դպրոցական յանձնաժողովի այդ որոշումը։

ՆԱԻԹԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ IX ԺՈՂՈՎԸ

II

Չորրորդ նիստում, որ կայացաւ հոկտեմբերի 27-ին, 52 նաւթարդիւնաբերողների և 48 հիւրերի մասնակցութեամբ, ժողովը նախ և առաջ զբաղվեց վարչութեան հաշվի քննութեամբ։ Որոշվեց չը կարդալ հաշիւը, ի նկատի ունենալով, որ ժողովականները արդէն ծանօթացել էին նրա բովանդակութեան հետ տպագրված օրինակներից։ Ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել վարչութեան՝ նրա արդիւնաւոր և օգտակար գործունէութեան համար։

Օրակարգի միւս խնդիրներից ուշադրութեան արժանի էին Սաբունչում հիմնված երկրագործական դպրոցի և Բալախանում հիմնվելի օրբանոցի խնդիրները։

Վարչութեան զեկուցումից յայտնվեց, որ ներկայումս Սաբունչում գոյութիւն ունի կանոնաւոր երկդասեան գիւղական դպրոց, տարեկան չորս հազար ռուբլի եկամուտով. բացի դրանից, դպրոցը ունի 14 հազար ռուբլի դրամագլուխ սեփական շինութիւն կառուցանելու համար։ Ի նկատի ունենալով, որ այդ գումարներով դպրոցը միանգամայն ապահովված է, ժողովականները հարց բարձրացրին, թէ արդեօք նաւթարդիւնաբերողների ժողովի վարչութիւնը չէ կարող իր ձեռքի տակ ունեցած դրամական միջոցներով միանալ այդ դպրոցի հոգաբարձութեան հետ և միասին գործել մի ընդհանուր ծրագրով՝ նաւթարդիւնաբերական ամբողջ շրջանում ժողովրդական կրթութեան գործը լաւ կազմակերպելու համար։ Այդ խնդրի մասին վարչութիւնը տուեց իր զեկուցումը. նրա գլխաւոր նպատակն այն է, որ նաւթարդիւնաբերական շրջանի գործաւորների զաւակները կարողանան բոլորն էլ ուսում ստանալ, ուստի և պէտք է այնքան թւով դպրոցներ հաստատել, որոնք կարողանան այդ պահանջին դոհացում տալ. այժմեան դպրոցը հազիւ կարողանում է ընդունել 93 աշակերտներ, մինչդեռ 400 աշակերտների տեղ պէտք է ունենար։ Այդ խնդրի լուծումը ժողովը յետաձգեց, յանձնելով նրա մշակումը ֆինանսական յանձնաժողովին։

Արդեօք դա հարցը թաղել չէ նշանակում...

Դրանից յետոյ ժողովը զբաղվեց Բալախանում օրբանոց հաստատելու խնդրով։ Վարչութեան զեկուցումից յայտնվեց, որ 1892 թ. խօլերայի ժամանակ, Բալախանում երեսի վրա էին մնացել 14 որբեր։ Որովհետև նաւթարդիւնաբերական ամբողջ շրջանում չը կար և չը կայ այժմ ևս որ և է հասարակական բարեգործական հիմնարկութիւն, որ անտէր որբերի օգնութեան հասնէր, մի քանի մասնաւոր անձինք այդ հոգը իրանք յանձն առան։ Բայց այդ օգնութիւնը ժամանակաւոր լինելով և առհասարակ որբերին խնամող մի հաստատութեան կարիքը զգացվելով, յիշեալ անձինք դիմեցին վարչութեան և առաջարկեցին բանալ Բալախանի-Սաբունչի նաւթարդիւնաբերական շրջանում մի օրբանոց։ Այդ պատճառով վարչութիւնը և առաջարկում է ժողովին օրբանոց բանալու ծրագիրը։ Մանրամասն հաշուից երևում է, որ այդ օրբանոցը տարեկան 3,000 ռուբլի ծախս կունենայ և նրա մէջ կարող են պատսպարվել և խնամվել մօտ 15 որբեր։

Երկար վիճաբանութիւնից յետոյ ժողովը վճռեց՝ չը բանալ սեփական օրբանոց, այլ մտնել բանակցութեան մէջ Բագուի Բարեգործական ընկերութեան հետ, և նրա հետ համաձայնութիւն կայացնել՝ որոշ նպաստով որբեր պահելու, նրա ապաստարանի մէջ։

Զարմանալի է, ճշմարիտ, որ մի ահագին ժողով, որ ահագին արդիւնաբերութիւն ունի իր ձեռքի տակ, այնքան ժլատ գտնվեց, որ խնայեց մի քանի հազար ռուբլի սեփական օրբանոց բանալու համար, մինչդեռ այդ տեսակ հիմնարկութեան կարևորութիւնը մշակների համար՝ աւելի քան հարկաւոր է։

***

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱԿՏը

Մոսկվայի Լազարեան ճեմարանի տարեկան ակտը, որ կանոնադրութեամբ նշանակված է հոկտեմբերի 24-ին, այս տարի, ընդհանուր սգի պատճառով, կատարվեց շատ համեստ կերպով։

Ճեմարանի դահլիճը հաւաքված աշակերտները լսեցին ճեմարանի դիրեկտոր Գ. Քանանովի հետևեալ խօսքերը. «Պարոններ, մեր Մեծ Թագաւոր Ալէքսանդր III-ի անժամանակ մահը խորին սգի մէջ գցեց ամբողջ Ռուսաստանը և այդ ամեն բան մոռացնող տխուր անցքը ստիպում է լռեցնել մասնաւոր և հասարակական բոլոր ուրիշ շահերը։ Ամենքին յայտնի են։ Որ այդ միտքը սխալ է, դրա ապացոյց կարելի է բերել հէնց իրան, «Մուրճի» դրախօսին, որը մինչև այժմ դեռ չէ կարողանում ջոկել սեռային ընտրութիւնը բնական ընտրութիւնից։

Մարդ մնում է զարմացած, թէ ինչն էր ստիպում պ. Ա. Ա.-ին հրապարակ դուրս գալ, քննադատել դարվինիզմին վերաբերող մի գիրք, աղաւաղել Դարվինի մտքերը, քարոզներ կարդալ հեղինակի գլխին հէնց այն պատճառով, որ նա՝ հեղինակը հարազատ կերպով արտայայտել է Դարվինի ուսմունքը,—կրկնում ենք՝ ինչն էր ստիպում պարոնին այս բոլորը անել՝ այն էլ մեծ ապլոմբով, երբ նա ոչ միայն չէ ուսումնասիրել, այլ մինչև անգամ չէ կարդացել Դարվինի ամենաերևելի գրուածքը։

Մենք չենք պահանջում, որ ամենքն էլ կարդան Դարվինի գրուածքները. այդ անյարմար է շատերի համար, ուստի յաճախ ստիպված են լինում ծանօթանալ դարվինիզմի հետ զանազան ժողովրդական բրոշիւրների կամ նոյն իսկ էնցիկլոպեդիական բառարանների միջոցով։ Մենք պնդում ենք միայն այն, որ այդպիսի համեստ պաշար ունեցողներին անյարմար է հրապարակ դուրս գալ և մեծ ապլոմբով խօսել դարվինիզմի մասին։

Սամուէլ Բալաղեան

Մի ուրիշ տեղ, խօսելով որձերի այն զգայարանքների մասին, որոնք ծառայում են էգերին գրաւելու կամ զմայլելու համար՝ Դարվինը աւելացնում է. «պարզ է, որ այդ յատկանիշները հետևանք են սեռային և ոչ հասարակ (այսինքն բնական) ընտրութեան, որովհետև չը դիտված և չը զարդարված կամ ոչ գրաւիչ որձերն էլ կարող էին աջողութիւն ունենալ գոյութեան կռուում»... («Մարդու Ծագում», երես 294)։ Նոյն գրուածքի 292 երեսում առաջ բերելով մի շարք փաստեր՝ Դարվինը աւելացնում է. «Այստեղ մենք գործ ունենք ընտրութեան միայն այն տեսակի հետ, որը ես անուանեցի սեռային»։

Պարզ է այժմ ձեզ համար, պ. քննադատ, որ Դարվինը համարում էր սեռային ընտրութիւնը մի ուրիշ տեսակ ընտրութիւն։ Եթէ այս էլ բաւական չէ ձեզ համար՝ կարող եմ մատնացոյց անել ձեզ նոյն գրուածքի 317 երեսի վրա, ուր ասված է. «սեռային ընտրութիւնը գործում է աւելի մեղմ քան բնական ընտրութիւնը»... ապա Դարվինը նուիրում է մէկուկէս երես սեռային և բնական ընտրութեան համեմատութեանը։ Այդ երեսներում Դարվինը ոչ միայն ապացուցանում է, որ այդ երկու տեսակ ընտրութիւնները ջոկ ջոկ բաներ են, այլ և ցոյց է տալիս, որ լինում են դէպքեր, երբ բնական և սեռային ընտրութիւնները գործում են բոլորովին հակառակ ուղղութեամբ. բնական ընտրութիւնը աշխատում է ոչնչացնել կամ գոնէ նուազեցնել այն, ինչ որ առաջ է եկել չնորհիւ սեռային ընտրութեան։

Այդպիսով Դարվինը ամեն մի քայլափոխում շեշտում է, որ սեռային և բնական ընտրութիւնների մէջ կայ տարբերութիւն և այդ տարբերութիւնը այնքան մեծ է, որ ստիպեց նրան բացի «բնական ընտրութիւնից» հնարել մի երկրորդ տերմին—«սեռային ընտրութիւն»։

Այստեղից ակներև է, որ պ. Ա. Ա.-ի վկայութիւնը, թէ իբր Դարվինը «չի ուզեցել յայտնել, որ բնական ընտրութիւնը ջոկ բան է, սեռային ընտրութիւնը ջոկ բան»—այդ վկայութիւնը միանգամայն սուտ է։

Վերև բերած փաստերից մի ուրիշ անխուսափելի եզրակացութիւն էլ է բղխում, այն է, որ «Մուրճի» դրախօսը՝ Դարվինի ամենաերևելի գրուածքի երեսը չէ տեսել, թէև խօսում է մեծ ապլոմբով այդ գրուածքի մասին։ Իրաւ, եթէ Դարվինը յայտնած լինէր իր միտքը գրուածքի միայն մի տեղում, այդ կարելի էր գուցէ և չը նկատել, բայց մենք արդէն տեսանք, որ նա ամեն մի քայլափոխում շեշտում է երկու տեսակ ընտրութիւնների տարբերութեան վրա։ Այնպէս որ՝ եթէ պ. Ա. Ա. երբ և իցէ տեսած լինէր Դարվինի գրուածքը, նա երբէք չէր վերագրի Դարվինին այնպիսի սխալ միտք, որը իսկապէս պատկանում է միայն իրան՝ «Մուրճի» դրախօսին։

Մի հանգամանք էլ կայ, որը նոյնպէս ցոյց է տալիս, որ «Մուրճի դրախօսը չէ տեսել «Մարդու ծագումը»։ Ահա այդ հանգամանքը։ Նա իր դրախօսութեան մէջ ասում է. «ճիշդ է, որ Դարվինը «Մարդու ծագումը» գրուածքում... առանձին գլուխ է յատկացրել սեռային ընտրութեանը»... Այդպիսով պարոնը միամտաբար կարծում է, թէ Դարվինը վերոյիշեալ գրուածքում մի գլուխ է յատկացրել սեռային ընտրութեանը։ Պատիւ ունեմ յայտնելու, պ. դրախօս, որ ձեր մատնացոյց արած գրուածքում Դարվինը յատկացրել է ոչ թէ մի, այլ ամբողջ 14 գլուխներ՝ բաղկացած 644 երեսներից։

Այո, այլ ևս կասկած չը կայ, որ պ. Ա. Ա. ոչ միայն չէ կարդացել, այլ նոյն իսկ չէ տեսել Դարվինի հանճարեղ գրուածքը։ Չը նայած դրան, նա այնպիսի ապլոմբով է խօսում թէ այդ գրքի մասին և թէ Դարվինի դիտաւորութիւնների մասին, որ կարծես թէ հանգուցեալ Դարվինը մի քայլ չէր անում, առանց պ. Ա. Ա.-ի հետ խորհրդակցելու։

Վերև մենք առաջ բերեցինք դրախօսի այն կարծիքը, թէ իբր դարվինիզմի հիմնական կէտերը արդէն ամենքին յայտնի են։ Որ այդ միտքը սխալ է, դրա ապացոյց կարելի է բերել հէնց իրան, «Մուրճի» դրախօսին, որը մինչև այժմ դեռ չէ կարողանում ջոկել սեռային ընտրութիւնը բնական ընտրութիւնից։

հերը։ Լազարեան ճեմարանի Բարձրագոյն հաստատված կանոնադրութիւնը ի կատար ածելու համար, մենք հաստատեցինք մեզ վրա դրած պարտաւորութիւնները կատարելու, բայց ես հրաժարվում եմ այսօր խօսելու ձեզ հետ մեր ճեմարանի սովորական պարտաւորութիւնների և կարիքների մասին։ Ընդհանուր տխրութեան ժամանակ մեզ մխիթարում է այն միտքը, որ գահ է բարձրանում Հանգուցեալի՝ ծաղկափթիթ հասակում և բարի ձգտումներով ու պայծառ յոյսերով տոգորված Որդին՝ մեր Ամենաողորմած Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչ, Որին մենք ամենքս մեր ամենահաւատարիմ հպատակութեան երդումը տուեցինք ծառայել հաւատարմութեամբ և ճշմարտութեամբ և Որի համար անդադար կաղօթենք, թող Աստուած օրհնէ Նրան և շնորհէ Նրան երջանիկ թագաւորութիւն երկար տարիներ։»

Ապա կարդացվեց անցեալ ուսումնարանական տարվայ հաշիւը, որից երևաց որ մասնագիտական դասարաններում հաշուեւական տարում կային 38 ուսանողներ, որոնցից ուսումն աւարտեցին 9 հոգի։ Ճեմարանի գիմնազիական դասընթացը աւարտեցին և ատեստատներ ստացան 18 հոգի։

Հաղորդելով այդ տեղեկութիւնները, «Русск. Вѣдом.» լրագիրը աւելացնում է, որ անցեալ ուսումնարանական տարին հայոց Կաթողիկոսը ուղարկեց իր օրհնութիւնը ճեմարանի աշակերտներին այն բանի համար, որ նրանք մի գումար հաւաքեցին յօգուտ Թիւրքաց Հայաստանի հայ սովեալներին։»

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 28-ին

Ինչպէս երևում է, վճռել են տգէտ նորընծայ քահանաներով ողողել ամբողջ Երևանի թեմը. էլ կրթված կամ տգէտ չեն հարցնում, ձեռնադրում են անխտիր, ով որ դիմում է կամ նուիրում է մի որ և է գումար թեմական դպրոցի օգտին։ Մինչև անգամ չեն նայում, թէ ձեռնադրվողը արդեօք ապատ է հարկից թէ ոչ, կամ այն գիւղում, որի համար ձեռնադրում են՝ քահանայի կարիք կայ թէ ոչ։ Մի խօսքով ամեն մի տգէտի գլխին ձեռք դնելով՝ ուղարկում են առաջնորդելու ժողովրդին դէպի լուսաւոր կեանքը։ Ծիծաղելի չէ. խաւարը պէտք է տանի դէպի լոյս..

Դեռ չէ լրացել վեց ամիսը այն օրից, երբ Սեան անապատում փոխանորդը ձեռնադրեց 17 հոգի տգէտ քահանաներ։ Եւ ահա այժմ էլ սկսել է ձեռնադրել տգէտների նոր խմբեր, իւրաքանչիւր կիրակի օր, ընտրելով այս կամ այն գիւղը ձեռնադրութեան համար։ Հոկտեմբերի 16-ին, կիրակի օր, Օշական գիւղում, նոյն իսկ ս. Մեսրոպի գերեզմանի վրա, ձեռնադրեց երեք տգէտ տիրացուներ, երեքն էլ նոյն Օշական գիւղի համար, մինչդեռ այդ գիւղը առանց այն էլ ունի մի քահանայ։ Ուրեմն Օշական գիւղը, որը ունի 250 տուն բնակիչ, պէտք է պահի չորս քահանայ։

Այսօր փոխանորդը գնաց Եղուարդ գիւղը, և հոկտեմբերի 30-ին ձեռնադրելու է վեց տգէտ տիրացուներ, որոնցից երեքը նոյնպէս նոյն Եղուարդ գիւղի համար են, չը նայած որ Եղուարդը արդէն երկու քահանայ ունի։ Ուրեմն Եղուարդի պէս մի գիւղին տալիս են հինգ տգէտ քահանաներ։

Բայց լսեցէք աւելի հետաքրքիր կուրիոզը։ Եղուարդի քահանայի որդին, դեռ ևս ամիսներ առաջ, խնդրում է փոխանորդին և հարիւր բուբլի նուիրելով թեմական դպրոցին՝ իրաւունք է ստանում ձեռնադրվել դեռ ևս շատ առաջ ձեռնադրվող 17 հոգու հետ միասին։ Սակայն ինչ ինչ պատճառներով յետաձգվում է նրա ձեռնադրութիւնը մինչև այժմ, և որովհետև վերջերս մոտ նոյն Եղուարդ գիւղի երկու այլ տիրացուներ, դիմելով փոխանորդին՝ հաւանութիւն են գտնում և առաջիկայ կիրակի պէտք է ձեռնադրվեն, ուստի առաջին խնդրատուն տեսնելով, որ Եղուարդի համար հինգ քահանայ ձեռնադրվելով՝ հինգն էլ պէտք է քաղցած մնան, ինքը հրաժարվել է ձեռնադրութիւնից և յետ է պահանջում իր 100 բուբլին։

Կոնսիստորիայի քահանաները շատ են աշխատել համոզել տիրացուին, որ յետ կանգնի այդ պահանջից, բայց և այնպէս չէ համաձայնվել և պահանջում է իր 100 բուբլին։ «Մի ամբողջ տարի այս և այն վարդապետի մօտ ուղարկեն, պատրաստվեմ, 100 բուբլի նուէր տամ դպրոցին, հարկից ազատ լինեմ ու գնամ երեք չորս տգէտի հետ էլ մի գիւղի վրա ձեռնադրվեմ, որ քաղցած մեռնեմ»—ահա հրաժարվող տիրացուի բողոքը։

Ցաջորդ ձեռնադրութիւնը լինելու է այստեղ նոյեմբերի 6-ին. ճիշդ չը գիտենք քանիսը պէտք է ձեռնադրվեն, բայց հաւանական է, որ ութից պակաս չը լինեն։ Գարիբալդի գլխարկի տակից մաքուր սանրած ձիգ մազերով, ահագին մօրուքով, գուշակողի դէմքով, մի և նոյն ժամանակ իրանց անունը գրելու անընդունակ,—ահա այն ողորմելիները, որոնք մի քանի օրից յետոյ ընդունելու են քահանայի կոչումը և գնալու են ժողովուրդը հովուելու...

Ա—Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հոկտեմբերի 31-ին, երկուշաբթի, Աբասթումանից Թիֆլիս վերադարձաւ Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեվ, իսկ երէկ ճանապարհ ընկաւ Պետերբուրգ հանգուցեալ Կայսրը Ալէքսանդր III-ի թաղման ներկայ լինելու համար։

—

Մոսկվայի աղնուականութեան նահանգական պարագլուխը, իշխան Տրուբէցկոյ, արժանացաւ Կայսրից ստանալ հետևեալ պատասխան-հեռագիրը. «Չէի կասկածում, որ Մոսկվայի աղնուականութիւնը սրտանց կը վերաբերվի իմ մանիֆէստի խօսքերին։ Նա ինձ հետ մորմոքում է, որպէս ռուսական սիրտ. նրա հետ միացած ես կը գտնեմ ոյժ կատարելու այն ծանր գործը, որ այդքան վաղ վիճակվել է ինձ, և նուիրել իմ բոլոր ոյժերը թանդագին հայրենիքի ծառայութեանը։»

—

Հոկտեմբերի 23-ին Պետերբուրգի լրագիրների խմբագիրները և հրատարակիչները հետևեալ հեռագիրն ուղարկեցին Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւորի Կայսրուհուն, Լիվադիա. «Խորին կերպով ցնցված այն մեծ կորստով, որ ունեցաւ Ձեր Մեծութիւնը. Արքայական Ընտանիքը, Ռուսաստանը և ամբողջ աշխարհը, մենք համարձակութիւն ենք առնում արկանել առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան ամենախորին ցաւակցութեան ամենահպատակ զգացմունքները և աղերսում ենք Աստուծուն տալ Ձեզ մխիթարութիւն ռուս ժողովրդի սղտագին սիրոյ և անսահման անձնուիրութեան մէջ, որ միշտ շրջապատում էր Ձեզ, Թագուհի, ի Տէր հանգուցեալ Թագաւոր Ալէքսանդր Ալէքսանդրովիչին և Արքայական Ընտանիքը։» Այդ հեռագրին հետևեալ պատասխան—հեռագիրը ստացվեց Արքունիքի մինիստրից. «Թագուհի Կայսրուհին հրամայեց ինձ յայտնել Իր շնորհակալութիւնը այն զգացմունքների համար, որ յայտնված են հեռագրում և որոնցով ներշնչված են այն յօդուածները, որոնք նուիրված են Նրա հանգուցեալ Ամուսնուն։»

—

Դումայի հոկտեմբերի 31-ի նիստում քաղաքագլուխը առաջարկեց դումային՝ ի Տէր հանգուցեալ Թագաւոր կայսր Ալէքսանդր III-ի թաղման օրը, նախապէս հոգեհանգիստ կատարելուց յետոյ, աղքատներին հոգու հաց տալ (քելեխ) Թիֆլիսի բոլոր գերեզմանոցներում։ Դուման միաձայն ընդունեց այդ առաջարկութիւնը և վճռեց այդ բանի համար քաղաքային վարչութեանը անսահման կրէդիտ տալ։

—

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով հրամայել է Թիֆլիսի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Սարգսեանին՝ ճանապարհ ընկնել Պետերբուրգ և ներկայ լինել Թագաւոր Կայսրի թաղմանը, իբրև ամենայն հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ։ Սարգսեան եպիսկոպոսը, երէկ, նոյեմբերի 2-ին, ներկայանալով Կովկասեան կառավարչապետին, հաղորդեց այդ կարգադրութեան մասին, և երեկոյեան ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր երէկվայ նիստում, տեսչի ժամանակաւոր պաշտօնակատար ընտրեց Ց. Սաղաթելեանին։

—

Գաւառներից մի մի անգամ դիմում են մեր խմբագրութեան, գանգատվելով, որ չեն ստացել «Մշակի» որ և է համարը, և կամ ուշ են ստացել։ Այդպիսի դէպքերում մենք միշտ ստուգում ենք պօստից մեզ տուած ցուցակները, և միշտ դուրս է գալիս, որ այստեղ, Թիֆլիսում, բոլոր բաժանորդների համարները ժամանակին պօստն են յանձնված, առանց բացառութեան որ և է բաժանորդի։ Այդ հիման վրա մի անգամ ընդ միշտ յայտնում ենք մեր բոլոր բաժանորդներին, որ այդպիսի անկանոնութեան դէպքում միշտ պէտք է դիմել տեղական պօստային կայարանին և նրանից պահանջել, որ համարները ժամանակին հասցնեն։ Թիֆլիսի պօստը մեղաւոր չէ, այլ միայն տեղական պօստը։

—

Երկուշաբթի, հոկտեմբերի 31-ին, Թիֆլիսի կալուածական բանկի շինութեան մէջ տեղի ունեցաւ Թիֆլիսի աղնուականութեան ժողովի նիստը, գաւառական աղնուականութեան պարագլուխ իշխան Բէբութովի նախագահութեամբ։ Աղնուականների ժողովի այդ նիստում հարց յարուցվեց և առաջարկվեց Թիֆլիսի աղնուականութեանը՝ գնել նախկին Արծրունիների քարվանսարան, որովհետև ֆինանսների մինիստրութիւնը չէ համաձայնվում այդ քարվանսարան հաստատել կալուածական բանկի վրա և առաջարկում է ծախել այդ կալուածքը մինչև նոր տարին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, ժողովը ընդունեց իշխան Անդրոնիկովի առաջարկութիւնը, այն է՝ գնել քարվանսարան աղնուականութեան կարիքների համար, և մի յանձնաժողով ընտրել, որը պէտք է մշակի նախագիծ բանկի հետ համաձայնութիւն կայացնելու համար և այդ համաձայնութեան նախագիծը առաջարկել աղնուականութեան արտակարգ ժողովի հաստատութեանը երկու շաբաթվայ ընթացքում։

—

Այս օրերս լրագիրները Մոսկվայից բերեցին մի անախորժ լուր, որ իբր թէ ամբողջ յարձակվել է պրոֆէսոր Զախարինի տան վրա, ցանկանալով քարուքանդ անել նրա բնակարանը։ Շատ ուրախալի է, որ Մոսկվայի լրագիրները բոլորովին հերքում են այդ լուրը, հաղորդելով որ այդպիսի մի թշնամական ցոյցի նշան անգամ չէ եղել դէպի պրոֆէսոր Զախարինը, որը անձնուիրաբար բժշկում էր Օդոստափառ Հիւանդին։

—

Մոսկվայի լրագիրների վերջին համարներում նկարագրված է երկաթուղու այն դնացքի խորտակումը, որի մասին անցեալ անգամ հաղորդեցինք։ Սպանված է միայն մի հոգի. իսկ վիրաւորվածները մի քանի հոգի են։ Լրագիրները հաղորդում են, որ այդ նոյն դնացքով էր գնում ռուսաց սիրելի օբեր-պրոկուրոր Պօբեդոնոսցեվ, որին ոչինչ վնաս չէ հասել։

—

Նոյեմբերի 2-ին, Կարապետ Կեաչկեանի նուիրած գումարից, համաձայն նրա որոշման, 200 բուբլի յանձնեցինք Հաւաքալ գիւղի հայոց եկեղեցու վերաշինութեան մասնաժողովի նախագահ Ղևոնդ քահանայ Մեհրաբեանին, այդ եկեղեցու վերաշինութեան վրա գործ դնելու համար։

—

Մենք ստացանք Աստրախանից, Յովհաննէս Կիտայեանից 30 բուբլի, յօգուտ Բաղայել Պատկանեանի որդու։ Այդ գումարը պ. Կիտայեանի խոստացած նպաստի վերջին գումարն է։ Պ. Կիտայեան խոստացաւ երեք տարի չարունակ, տարեկան 60 բուբլի տալ Պատկանեանի որդուն, որը ուսանում է Արհեստաւորաց դպրոցում, և ճշդութեամբ կատարեց իր խոստումը։

—

Երևանի թեմի դպրոցների նոր թեմական տեսչի մասին, որի անունն է Բենիկ, Էջմիածնից մեզ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները. «Բենիկ աբեղան ապարանցի է, իր ուսումը առել է Գէորգեան ճեմարանում, 1890 թ-ին Ներսէս եպիսկոպոսից ստացել է սարկաւագութիւն։ Էջմիածնում յայտնի էր որպէս Ստեփան սարկաւագ, իսկ Թիֆլիսի մի երկու հայ թերթերում որպէս հեղինակ բազմաթիւ լուրերի, մանաւանդ տեղակալութեան օրերում, որոնց համար Երեմիա եպիսկոպոսը նրան արձակեց պաշտօնից և հեռացրեց իր ծննդավայրը—Ապարան։ Վեհափառը Էջմիածին գալով՝ ներեց նրան և անցեալ սեպտեմբերին աբեղայութիւն տուեց, և մի ամսից յետոյ նշանակեց Երևանի ընդարձակ թեմի բազմաթիւ դպրոցների վերատեսուչ։»

—

Երեքշաբթի, նոյեմբերի 1-ին, կայացաւ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստը, որ նուիրված էր ընթացիկ գործերին։ Ժողովը ընտրեց մի յանձնաժողով՝ քննելու Մլինցլովի ծրագիրը գինու ակցիզի մասին։

—

Ցնայնագործութեան օգնելու նպատակով այս տարի հիմնվից Պերմ քաղաքում մի փոխատու բանկ, որ այժմ տպագրել է իր իննամեայ գործունէութեան հաշիւը։ Հաշուից երևում է, որ բանկը կարողացել է օգնել թէ առանձին տնայնագործներին և թէ համայնքներին։

—

Քաղաքային դումայի ձայնաւոր Շահազիզով դումայի նախընթաց նիստերից մէկում առաջարկել էր տօնել ռուսաց յայտնի առակախօս Ի. Կրիլովի մահվան 50-ամեակը։ Դուման հոկտեմբերի 31-ի նիստում, ընդունելով այդ առաջարկութիւնը, վճռեց. 1) անուանել Կրիլովի անունով X-րդ քաղաքամասում բացված այն նոր փողոցը, որ անցնում է հանգուցեալ Զիմախովի հողի միջով. 2) քաղաքային ապագայ սկվէրներից մէկը «Կրիլովեան» անուանել, և 3) բաժանել քաղաքային տարրական դպրոցների, արհեստաւորաց դպրոցի և պրոֆէսիոնալ արհեստանոցի աշակերտներին և աշակերտուհիներին Կրիլովի առակների էժան հրատարակութիւնը, որի համար տալ 100 բուբլի։

—

Օգոստոսի 23-ին, գիշերը, կաթուածից յանկարծամահ է եղել Պետերբուրգում գիներալ-լէյտենանտ իշխան Նիկոլայ Իմէրէտինսկի։ Հանգուցեալը Իմէրէթիայի թագաւորի սերունդ էր։

—

Այս ամսի սկզբներին, Բաքուում տեղի կունենայ, ինչպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, նկարիչ Բաշինջաղեանի նկարների ցուցահանդէսը, որ կը չարունակվի երեք շաբաթ։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Շարունակ մառախուղ և անձրևային եղանակներ են լինում։ Այգիները քաղած են. թէպէտ այս տարի բերքը սովորականից առատ է, բայց խաղողի յատկութիւնը լաւ չը լինելով, գինին վատ է դուրս գալիս»։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Կովկասի համարեա բոլոր քաղաքներում կիրակնօրեայ հանգստութիւնը պահվում է, միայն Քութայիսն է, որ բացառութիւն է կազմում։ Այստեղի գործակատարները այդ առիթով մի երկու անգամ խնդիրը են ներկայացրել, բայց վաճառականների կողմից միաձայն համաձայնութիւն չը լինելով և զանազան արգելքների հանդիպելով, առանց հետևանքի է մնացել։ Անցեալ օրերը դարձեալ բազմաթիւ ստորագրութեամբ երկու խնդիրք ներկայացրին քաղաքային ինքնավարութեան, մէկը գործակատարների, միւսը երկրորդ կարգի վաճառականների կողմից, խնդրելով արգելել կիրակի օրերը, ինչպէս Թիֆլիսում և գաւառական ուրիշ շատ քաղաքներում, խանութները բանալ։ Եւ ճշմարիտ, ինչու Քութայիսը բացառութիւն պէտք է կազմէ։ Այդ հարցի քննութիւնը նշանակված է նոյեմբերի 5-ի նիստում։ Ցոյս կայ, որ այժմեան քաղաքային իրաւասուները, որ մեծ մասամբ ինտելիգենտ մարդիկ են, կը յարգեն այդ խնդիրը»։ Խորհուրդ ենք տալիս գործակատարներին, եթէ այդ արտօնութիւնը կը ստանան, աշխատել մի որ և է օգտաւէտ կերպով անցկացնել կիրակի օրերը, ապա թէ ոչ պարապութիւնը հեշտութեամբ կարող է տանել դէպի արբեցողութիւն և անհոգ կեանքը։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են հոկտեմբերի 30-ից. «Այսօր Բարեգործական ընկերութեան ընթերցարանի դահլիճում տեղի ունեցաւ ընկերութեան ընդհանուր ժողովը։ Այդ ժողովում տեղի ունեցաւ նախագահի և քարտուղարի ընտրութիւնը և 1895 թ. նախահաշուի քննութիւնը։ Ընդհանուր ժողովի նախագահ վերընտրվեց, միաձայն, գաղտնի քուէարկութեամբ, Լեոն Սարգսեան, իսկ քարտուղար՝ Միրզա Տէր-Սարգսեան, ձայների առաւելութեամբ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՕՐԴ ՐՕԶԲԷՐԻ ԵՒ ԼՕՐԴԵՐԻ ԺՈՂՈՎԸ

—

Նորերս անգլիական Բարդֆորդ քաղաքում կայացաւ անգլիական բազատամիտ կուսակցութեան միտինգ, ուր լորդ Րոզբէրի մի քաղաքա-

կան ճառ արտասանեց, որ լոյս է գցում կառավարութեան դիտաւորութիւնների վրա։

Անգլիական առաջին մինիստրը յայտարարեց, որ այժմեան պարլամենտի գոյութիւնը երկար չէ կարող շարունակվել։ Երբ ընդհանուր ընտրութիւնները կը սկսվեն, ընտրողական պայքարը տեղի կունենայ, հռետորի կարծիքով, ոչ թէ հսմբուլի կամ եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցերի առիթով, այլ լօրդերի ժողովի առիթով։ Այդ հարցը նոր չէ, բայց նա պատկանում է այն հարցերի թւին, որոնց առաջին մինիստրը, նրա ասելով, միշտ մեծ նշանակութիւն է տուել։

Լօրդ Բոզբէրիի արշաւանքի պատճառը լօրդերի ժողովի դէմ հետեւեալն է։ Ինչպէս յայտնի է, մինչև այժմ լօրդերի ժողովի կազմակերպութիւնը ոչինչ փոփոխութեան չէ ենթարկվել, այն ինչ համայնքների ժողովը վերջին 60 տարիների ընթացքում երեք անգամ փոփոխութեան է ենթարկվեր արմատական ուղղութեամբ։ Այդպիսով, մի կողմից գոյութիւն ունի համայնքների ներկայացուցիչների ժողովը, որը ընտրվում է դեմոկրատական շատ լայն սկզբունքներով, իսկ միւս կողմից լօրդերի ժողովը, որը բաղկացած է համարեա բացառապէս «պէրերից», որոնք թիւնամարար են վերաբերվում ժողովրդական ձգտումներին։ Եթէ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ համայնքների ժողովում կընտրվեն 100 կամ 600 ազատամիտներ, լօրդերի ժողովում այնուամենայնիւ կը մնան միայն 30 ազատամիտ լօրդեր։ Դա ծաղր է ազատ հիմնարկութիւնների վրա։

Լօրդ Բոզբէրի յայտարարեց, որ սկզբունքով ինքն երկու ժողովների կողմնակից է և չէ ցանկանում, որ երկիրը կառավարվի մի ժողովով, ինքնագլուխ կերպով. բայց եթէ իրան առաջարկեն ընտրութիւն անել այդ երկու ժողովների մէջ, ինքն, ի հարկէ, համայնքների ժողովի կողմը կը լինի։ Գոյութիւն ունեցող դրութիւնը, Բոզբէրիի կարծիքով, անպայման վտանգ է ներկայացնում և կարող է յեղափոխութիւն առաջացնել։ Լօրդերի ժողովը ներկայացնում է մի կուսակցական կազմակերպութիւն, որ ծառայում է կուսակցական նպատակներին և որը գտնվում է կուսակցական ղեկավարների հակողութեան տակ։

Լօրդերի ժողովից veto-ի իրաւունքը խլելու հետ կապված դժուարութիւնները ցոյց տալով, լօրդ Բոզբէրի ասեց, թէ մինիստրութեան մի քանի կողմնակիցները դժգոհ են կուսակցութեան դանդաղկոտութիւնից այդ հարցում։ Սակայն սահմանադրական մի այդպիսի նշանաւոր հարցին աջող լուծում տալու համար, անհրաժեշտ են երկրի և պարլամենտի ձեռքում գտնվող սահմանադրական զօրեղ գործիքներ։ Այդ գործիքներից առաջինը համայնքների ժողովն է. կառավարութիւնը կը դիմի նրան և կառաջարկի նրան մի վճիռ կայացնել, որով համայնքների ժողովը պէտք է առաւելութիւն ունենայ լօրդերի ժողովից։ Այդ վճիռը ահա առիթ կը տայ սահմանադրութեան փոփոխութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզից հեռագրում են, որ հանդուցեալ Ալէքսանդր Կայսրի թաղման օրը Պարիզը սգաւորված կը լինի. թատրոնները և բանկերը կը փակվեն։

—Լրագիրները հաղորդում են, որ Եապոնիան հաշտութեան հետեւեալ պայմաններն է առաջարկում. Կորէյային անկախութիւն տալ, Ֆորմոզա կղզին զիջանել, Չինաստանի և Կորէյի մէջ մի չէզոք պետութիւն հաստատել, և 30—40 միլիոն ֆունտ ստերլինգ պատերազմական տուգանք վճարել։

—«Daily News» լրագրին հաղորդում են, որ Կորէյի երկու հարաւային նահանգներում կատաղի հալածանք է սկսվել տեղացի քրիստոնեաների դէմ, որոնք թւով մօտ 11.000 են այդ երկու նահանգներում։ Արդէն տեղացի շատ քրիստոնեաներ սպանված են և շատերն էլ բռնի կրօնափոխ են եղած։ Իւրաքանչիւր քրիստոնեայ Չինաստանում այժմ պէտք է դողայ իր կեանքի համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 հոկտեմբերի։ Պետական ազնուական կալուածական բանկի գրաւական արժէթղթերի տարած գումարների նոյեմբերի 1-ին նշանակված հերթական տիրաժը յետաձգվում է մինչև նոյեմբերի 3-ը։

ՄՕՍԿՎԱ, 1 նոյեմբերի։ Երկկ տեղի ունեցաւ Բարձրագոյն ելքը։ 9 ժամին մօտ, Կրէմլեան մեծ պալատի Գէօրգիեվեան դահլիճում հաւաքվեցին բոլոր դասակարգերը։ Թագաւոր Կայսրը քաղաքագլխին մի քանի ողորմած խօսքեր ասեց և չնորհակալութիւն էր յայտնում Մոսկվային նրա զգացմունքների համար։ Մօտ 10 ժամին Կայսերական Ընտանիքը անցաւ Կարմիր սանդուղքից սալայատակով Արխանգէլեան տաճարը, ապա, հոգեհանգստից յետոյ, 10 ժամին դուրս բերեցին ի Տէր հանգուցեալ Թագաւորի մարմինը դէպի Նիկոլաևսկայա երկաթուղու կայարանը։ Հանդիսաւոր ընթացքը շարժվեց, ցերէմոնիալի համաձայն. ամենից առաջ գնում էր Նորին Մեծութեան լէյբ-գրէնադէրեան գունդը, որը, կայարան հասնելուց յետոյ, կանգնեց կարգով սգազգեաց պավիլիոնի առջև, ուր արդէն կանգնած էր սգազգեաց գնացքը։ Ամպհովանու ձողերի մօտ կանգնած էին՝ ձախակողմը—Գալ և Ստոլիպին գեներալները, աջակողմը—իշխան Խմէրէտինսկի և Մուսին—Պուշկին. չքանչանները բարձերի վրա ներս տարան սգազգեաց վագոնը. դագաղը վերցրին ամպհովանուց պալատական գրէնադէրները և ներս տարան պավիլիոնի պլատֆորմի վրա, ուր Սերգի միտրոպոլիտը բարձր հոգևորականութեան հետ միասին հոգեհանգիստ կատարեց, որից յետոյ Թագաւոր Կայսրը և Մեծ Իշխանները սգազգեաց վագոնը ներս տարան դագաղը։ Այդ գնացքով, բացի Սերգի Ալէքսանդրովիչ, Միխայիլ Նիկոլաևվիչ Մեծ Իշխաններից և պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկուց, ճանապարհ ընկան Պետերբուրգ բոլոր Օգոստափառ Անձինքը 12 ժամ 5 րոպէին, հրապարակի վրա կանգնած զօրքերի թնդանոթաձգութեան և հրացանաձգութեան ուղեկցութեամբ։ Սգաղնացքից յետոյ ճանապարհ ընկաւ սվիտային գնացքը արքայանշաններով, իսկ երկու ժամին ճանապարհ ընկաւ Սերգի Ալէքսանդրովիչ Մեծ Իշխանը իր Ամուսնու հետ, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևվիչ և Օլդենբուրգեան պրինցը սվիտաներով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 նոյեմբերի։ Կայսր Ալէքսանդր III-ի մարմնի թաղման օրվայ համար մայրաքաղաքի փողոցները խորին կերպով սգաւորվեցին. մանաւանդ շքեղ է Նէվսկի պրոսպէկտի և տխուր հանդիսի անցնելու ամբողջ ճանապարհի սգային զարդարանքը. տները սև և սպիտակ շղարշով են ծածկված, բոլոր լապտերների սիւները Նեվսկի պրոսպէկտի վրա սև ժապաւէններով են փաթաթված, կառուցված են սգային պիրամիդներ և սիւներ սափորներով։ Նորին Մեծութեան կաբինէտի շինութիւնը ամբողջապէս սևով է ծածկված. օտարազգի դեսպանատների վրա ծածանվող դրօշակները իջեցրած են։ Այսօր վաղ առաւօտվանից Պետերբուրգի փողոցների վրա անսովոր կենդանութիւն է տիրում. ամենքը շտապում էին տեղեր գրաւել տների պատուհաններում կամ մայթերի վրա. լոյս էին տալիս փողոցային լապտերները սգաշղարշի միջից. փողոցների վրա ածված են աւազ և մշտադալար թուփեր. 10 ժամին պրոցէսիան շարժվեց Նիկոլաևսկայա կայարանից և ձգվեց 4 վերստի վրա։ Պրոցէսիայում մասնակցում էին գվարդիայի զօրամասերը, բոլոր հիմնարկութիւնների ներկայացուցիչները, բարձրատիճան անձինք, մինիստրները։ Երկրորդ ժամին հոգեհանգիստ կատարվեց Պետրոպաւլովսկի տաճարում, որից յետոյ Թագաւոր Կայսրը ժամանեց Անիչկով պալատը։ Ամբոխը ահագին է պալատի շուրջը։

Հոկտեմբերի 31-ին, Կրէմլի Մեծ պալատի ներքին սենեակներից Բարձրագոյն ելքի ժամանակ դէպի Արխանգէլեան տաճարը. Թագաւոր Կայսրը Գէօրգիեվսկայա դահլիճում, դիմելով Մոսկվայի ազնուականութեան, վաճառականութեան և Մոսկվայի կառավարչական ու հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներին, ասաց. «Դժնար և ցաւալի է լինել այժմ Մոսկվայում, որին այնքան անկեղծ սիրում էր իմ Անմոռանալի Հայրը. բայց Կայսրուհին և ես սրտակից մխիթարութիւն ենք գտնում այն աղօթքների և արտասուքների մէջ, որ ամբողջ Ռուսաստանը թափում է այս փորձութեան օրերում։ Թող օգնի ինձ Աստուած ծառայել Մեր Ջերմ սիրած հայրենիքին նոյնպէս, որպէս ծառայում էր նրան իմ հանգուցեալ Հայրը և տանել նրան նրա ցոյց տուած պայծառ և ճառագայթափայլ ճանապարհով։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 31-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	80 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	45 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	82½
Ոսկի — — արժէ . .	7 »	43
Մաքսային կուպոններ — . .	148 »	50 »
Արծաթ — — — . .	— »	— »
Օբրային դիսկոնտ — . .	5 »	7 »
ԵՊտ. բանկի 5% տոմս 1 հրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա.	94 »	75 »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	242 »	— »
— — երկրորդ —	220 »	— »
Պետական երկաթուղային բէնտա.	101 »	25 »
4½ բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	96 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. Գրաւ. թղթ. — — .	191 »	50 »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	— »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	100⅞ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅛ »	— »
Օդէսայի — —	100 »	— »
Թիֆլիսի — —	98 »	25 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101 »	— »
— — Քութայիսի — .	101 »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՓԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

հայոց թագաւորների պատկերներ. գինն է 10 հատը 6 բուբլի։ 1 հատը 1 բուբլի։

„ՀՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ուսանկար պատկերներ, չափն է 12 վերշոկ, գինն է 10 հատը 15 բուբլի, 5 հատը 8 բուբլի, հանդերձ ճանապարհածախսով. կարելի է ստանալ նաչօժնի պլատեժով։

Հասցէն. Москва, арм. церковь. И. Гечеву. (№ 118) 5—5

10,000 ՐՈՒԲԼԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Երիտասարդ հասակիս մէջ սարսափելի դժբաղդութիւն պատահեց ինձ։ Առանց գլխացաւի և առանց մէկ ուրիշ պատճառի, աչքերիս լոյսը օրէ օր պակասեց։ Մօտ երկու տարի է սկսվելուց մինչև հիմա. կամաց կամաց հասայ այն դրութեանը, որ այժմ միայն աչքերիս կշտերից եմ տեսնում. մօտիկից մարդկանց տեսնում եմ, ինչպէս ստուերներ, կարծէք ծուխի մէջ։ Առաւօտները աչքերիս լոյսը աւելանում է, իսկ քիչ յետոյ մթնում է։ Աչքերս խատակ են և մաքուր, այնպէս որ ինձ նայողը չէ հաւատում, թէ չեմ տեսնում։

Ռուսաստանի և արտասահմանի բժիշկներին դիմեցի, բայց ոչինչ օգուտ չունեցայ. չը կարողացան աչքերիս տկարութեան առաջն առնել, որ չաւելանայ։ Բժիշկները այս տկարութիւնը անուանում են Հղային տկարութիւն, իսկ ժողովրդական խօսքով դա անուանվում է սև Ջուր։

Բժիշկները առողջանալու յոյս չեն տալիս. ուստի, իբրև վերջին միջոց, ահա դիմում եմ ամենքին, գուցէ այս տկարութեան մասին տեղեկութիւն ունեցողներ լինեն և ինձ կարողանան բժշկել։ Ի սէր Աստուծոյ, ով ազատվել է այս ցաւից, թող նամակով հաղորդէ, թէ ինչպէս է բժշկվել կամ ով է բժշկել։ Դրանով իմ կեանքը կը փրկէ։ Նամակ գրողները պէտք է դիմեն այս հասցէով։—Ալէքսանդրոպոլ, հոգևոր կառավարութեանը, տէր-Բարդուղիմէոս Տէր-Մարտիրոսեանցին։ Նա ինձ կը հասցնէ։

Ով որ ինձ այս տկարութիւնից ազատէ, ինձանից վարձատրութիւն կը ստանայ 10,000 բուբլի։ 1—1

Ուսուցիչ ԳԷՈՐԳ ԴԻԻԱՆԵԱՆՑ՝ իր զաւակներով, ԿԷԿԷԼ Բերլինեան, Եղիսաբէթ Բաղինեան, և եղբաբք Սուլեաններ, խորին ցաւով յայտնելով՝ առաջինը իր ամուսնու և միւսները իրանց քրոջ

ԿԱՏԱՐԻՆԷ ԴԻԻԱՆԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին հինգշաբթի, նոյեմբերի 3-ին, առաւօտեան 10 ժամին, շնորհ բերել յուղարկաւորութեան, սեփական տունից, Բօլշայա-Կրիվայա, № 23, դէպի Կաթուղիկէ ս. Գէորգ եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

Կայսրուհի Մարիա Ալէքսանդրովնայի ԿՈՅՐԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺՆԻ խորհուրդը, պէտք ունենալով եկող 1895 թվի յունվարի 1-ից մի բնակարանի, որտեղ գետեղվէր ձրի Աչքաբուժարանի բաժինը, հրաւիրում է Թիֆլիս քաղաքի տանտէրերին, որոնք կը ցանկան իրանց անները տալ վարձով այդ հաստատութեան համար, յայտնեն այդ մասին կամ աչքաբուժարանի դիրեկտոր բժշկապետ Տարասիձէին (Ֆրէյլինսկայա, տուն Շադինովի) կամ խորհրդի քարտուղար Նաումովին (Կովկասեան արխէոգրաֆիական յանձնաժողով, Սէրգիեվսկայա փողոց, տուն Շահպարոնեանցի)։

Աչքաբուժարանի համար բնակարանը պէտք է լինի քաղաքի կենտրոնում և ունենայ 8—10 մեծ, լուսաւոր սենեակներ, իւղով ներկած պատերով։ (№ 127) 1—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ—ԱԿՕՊՕՎԻ

Ընդունում է երթևեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ։ Սօլօլակ, Գանձակայա փ. № 11. (№ 127) 1—10

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թուին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱԽՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . .
„Театральныя“. . . . . 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—13

Дозволено цензурою, Тифлисъ, 2 Ноября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.